

վերլուծութիւնը, ամենեւին չհակասելով աւետարանական պատմութեանը, կարողացել է գոնէ մասամբ այս մութ հարցը պարզել, որ մեր սրտին շատ մօտ է:

Թարգմ. Յ. Դր.



Դարձեալ Զուարթնոց եկեղեցին.

Թէպէտ «Արարատ»-ի նախընթաց համարներում լոյս տեսած Դեր. Յուսիկ եպիսկոպոսի յօդուածը բազմակողմանի կերպով և ցանկալի մանրամասնութեամբ պարզաբանում է Զուարթնոց եկեղեցու պեղումներին վերաբերեալ զրոյցներն ու թիւրիմացութիւնները, բայց խնդրի կարեւորութիւնը հարկադրում է մի քանի զխոտողութիւններ ևս մեր կողմից աւելացնել, մանաւանդ որ այդ յօդուածում ի միջի այլոց քննութեան են ընթարկուել մեր կարծիքները:

Այն հարցը, թէ արդեօք կարո՞ղ է Զուարթնոց եկեղեցին ս. Լուսաւորչի հիմնած Մայր տաճարը լինել, կամ խախտան ս. Էջմիածինն այժմեան Զուարթնոց եկեղեցու աւերակների տեղում շինուած լինել՝ արդէն վախուած պէտք է համարենք: Յիրաւի նոյն ուսումնական լուծումներից մի կը որոնց մասին յիշում է Յուսիկ Արքայան, լսել է իբր Տ. Խաչիկ վարդապետի բերանից, թէ նորա ձեռքում հին հին վաւերագրեր կան, և դոցա հիման վերայ ոչ միայն հարցը դնել, այլ և հաստատել կարելի է. բայց յայտնի է արդէն, որ ինքը Հ. Խաչիկ, փոխանակ խորհրդաւոր վաւերագրերը հանդէս բերելու, հրապարակական հերքումով «անհեթանոսութիւն» անուանեց բոլոր այդպիսի զրոյցները: Նոցանով դրադուել ներքի կլինի այսուհետև ուրեմն այն ժամանակ միայն, երբ իրօք հրապարակ լինեն չստուած ու չտեսնուած վաւերագրերը, որոնք կախարդական զօրութիւն ունին անհեթանոսութիւնն իրողութիւն գարձնելու:

Այլ է խնդիրը ս. Լուսաւորչի մասունքների մասին: Հարկաւ այստեղ ևս, ինչ վերաբերում է այն կէտին, թէ արդեօք կարո՞ղ են Զուարթնոց եկեղեցու սիւնների տակ ս. Լուսաւորչի նշխարներ գտնուիլ՝ հարցը վերջացած պէտք է համարուի: Բաւական է շեշտել, որ այս եկեղեցու շինութեան նկատմամբ իսկական արժէք ունի միայն ժամանակակից Սեբէոսի պատմածը, իսկ աւելի ուշ ժամանակի վկայութիւններից այն լրացուցիչ տեղեկութիւնները կարելի է առնել, որոնք նորան ուղղակի չեն հակասում: Եւ որովհետեւ Սեբէոս ս. Գրիգորի անուն ամենեւին չի տալիս, եկեղեցին նուիրուած է ասում՝ Երկնային Զուարթնոց, և ոչ ս. Գրիգորի անուն՝ անհնարին է, որ նորա հիմքում նշխարներ գտնուին: — Սակայն Յուսիկ սրբազանի արձարձած խնդիրների մէջ կոդմնակի շատ կէտեր կան, որոնք նորանոր աւարկութիւններ են վերցնում, և մեր խօսքը դոցա մասին կլինի:

Նա հերքում է մեր այն կարծիքը, թէ ս. Լուսաւորչի նշխարները հաւանականաբար «շարժական են դարձել» Գիւտ կաթուղիկոսի օրով և առաջին անգամ՝ ս. Գրիգորի անուն նուիրած Դուինի Մայր եկեղեցու հիմքում դրուել: — Յիրաւի մեր «Հարեանցի նկատողութեան» մէջ անուշադիր էինք թողել Փարպեցու այն յիշատակութիւնը, որից երևում է, թէ արդէն 450 թ. ինչ Վարդանանց ժամանակ, ս. Գրիգորի նշխարները «շարժական» սրբութիւն էին: Բայց դժբանքով հերքուում է մեր նկատողութեան մի կէտը միայն՝ այն որ ս. Լուսաւորչի նշխարները Գիւտ կաթուղիկոսի օրով չեն իրենց հանգստարանից հանուել, այլ աւելի վաղ՝ իսկ թէ այդ նշխարները բերուել են Դուին և առաջին անգամ այդ եկեղեցին է ս. Գրիգորի անուն նուիրուել՝ դա մի կարծիք է, որը հաստատ պահելու դեռ բաւական հիմունքներ ունին: Մինչև անգամ, եթէ ս. Վարդանի իբրեւ եկեղեցին շինողի՝ մասին եղած յիշատակութիւնը բոլորովին հիմքից զուրկ չհամարենք, կարելի է մտածել, թէ յատկապէս այդ եկեղեցին նուիրագործելու համար և բերուած լինին ս. Լուսաւորչի նշխարներն ու ապա իբրեւ սրբութիւն պահուած: Փարպեցին չի յիշում, թէ «դաք պաշտօնէիցն Քրիստոսի»

ճրակելից ելան Հայաստան վերադարձող նախարարների դիմաց, դուռէ Դուինից էին ելնում և Դուինը մի տեսակ կենտրոն էր դարձել եկեղեցական վարչութեան արդէն այդ ժամանակ՝ ս. Սահակի և Մեսրոպի մահից յետոյ, իսկ Գիւտ կաթուղիկոսն է յիշուում իբրեւ Աթոռը Վաղարշապատից Դուին փոխադրող նորա համար, որ այս ժամանակամիջոցում իսկական կաթուղիկոս չի եղել և Գիւտ պէտք է համարուէր անմիջական յաջորդ ս. Սահակի։ Այսպիսով բաւական բան կարողութիւն ի միջի այլոց նաեւ այն հանգամանքը, թէ ինչու ս. Յովսէփի նախագահութեամբ գումարուած ժողովը Դուինին կից Արտաշատում էր։ Խնդիրն աւելի պարզ կլինի, երբ ուղղենք մեր մի ուրիշ սխալը, որով համարել էինք ս. Գրիգորի նշխարները «եկեղեցու հիմքում» դրուած, մինչդեռ եկեղեցւոյ նախնական սովորութիւնն է եղել սեղանի ներքեւ կամ վերան դնել սրբոց մասունքը։ Թէ որչափ հին է այդ սովորութիւնը՝ դժուար է տակ. միայն Դ. դարի վերջերին այնչափ ընդհանրացել ու հաստատուել էր, որ ս. Ամբրոսիոս յանձն չէր առնում եկեղեցի օրհնել, եթէ նորա մէջ սուրբի մասունք չդանուէր։ Մեղանում ևս յայտնի է, որ արդէն ս. Լուսաւորիչ իւր կառուցած եկեղեցիների մէջ դնում էր ս. Յովհաննու և ս. Աթանաղիոսի մասունքը, իսկ Դ. և. դարերի այն սուրբերի գերեզմանները, որոնց վերայ եկեղեցի է կառուցած՝ դանուում են սեղանի տակ, Վերջին հանգամանքը բաւական լոյս է սփռում նաեւ Զուարթնոց եկեղեցուն վերաբերեալ մի հարցի վերայ, որին յետոյ կդառնանք։

Յամենայն դէպս ս. Լուսաւորիչ նշխարները 450 թ. ին մէջանդ կային, և երբ նորա անունով մի եկեղեցի էր շինւում՝ այդ ժամանակ եկեղեցւոյ մէջ անհրաժեշտ կարգերը զրեթուեցան՝ այդ ևս պարզ յայտնի է։ Նշխարաց գիւտի պատմութիւնները, զանազան բացատրութիւններ կարող են վերցնել ինչպէս կաեսնէնք, բայց պատմական փաստը հերքել չեն կարող։ Փաւստոսի պատմութիւնը կասկածի տեղիք չի թողնում, որ ս. Լուսաւորիչ սկզբից և եթ թաղուած է

եղել թորդանում և այնտեղ նորա մօտ յետոյ տարել թա-
ղել են ս. Վրթանէսին և ս. Յուսիկին: Պ. Կոստանեան
իւր մանրամասն նկարագրութեան մէջ հարկաւ այդ կէտն
ևս ուշադրութեան է առել, բայց զուր տեղն աշխատում է
համաձայնեցնել դորա հետ հովիւների ու Գառնիկ ճգնա-
ւորի մասին եղած զրոյցը: Ինչպէ՞ս հաւանական կլինի, որ
այդ ճգնաւորը ս. Լուսաւորչի աշակերտներից մէկն էր,
քանի որ նոյն զրոյցը յառաջ բերող բոլոր պատմութիւն-
ների մէջ խօսքը մի Զենոն կայսեր ժամանակ եղած, Գառ-
նիկի մասին է, և արդէն Խորենացու ասելը, թէ «ղկնի
յետ քաղում ժամանակաց յայտնեցաւ ճգնաւորի ու-
մեմն Գառնիկ անուն կոչեցելոյ», պարզ կերպով մատնում
է իրեն: Էուն զրոյցը մեր հին «տօնական»ների մէջ վերջա-
բան է կազմում «Աստմութիւն սրբոյն Գրիգորի մերոյ Լու-
սաւորչին» վերնագրով մի վկայաբանական գրուածքի, որ
փոփոխած ձեով մտել է «Յայսմաւուրք»ների մէջ: Երկու
օրինակն ևս յառաջ են բերուած «Արարատ»ի ներկայ հա-
մարում: Իսկ նախընթաց համարում տպուեցաւ այն պատ-
մութիւնը, որ մեր եկեղեցում կարդացուել է «Պիւտ նըշ-
խարաց» տօնին՝ անշուշտ իբրեւ բացատրութիւն այդ տօնի
ծագման: — Ճշմարիտ է, այդ զրոյցը ներկայ խմբագրութեամբ
էր կարող ծանօթ լինել և. դարու մի հեղինակի. բայց պէտք
է արդեօք և. դարի հեղինակ համարենք մի պատմիչի,
որ այսպիսի աղբիւրներից է քաղել իւր պատմութիւնը...
Այլապէս մենք համաձայն ենք, որ ոչ միայն այն է սխալ,
թէ Գառնիկին նշխարները յայտնուել են և. դարում, այլ
և ամբողջ զրոյցը շատ ուշ ժամանակի ծնունդ է, որոշ դի-
տումներով ստեղծուած: Մի՞թէ կարելի է լրջօրէն ընդունել,
որ ս. Լուսաւորիչ անյայտութեան մէջ վախճանուեց և եր-
կար ժամանակ ոչ ոք՝ նոյն իսկ իւր երկու զաւակները,
չհետաքրքրուեցին իմանալու, թէ ինչ է պատահել նորա
հետ: Ինքը Խորենացին արդէն ակամայ յիշեցնում է, թէ
ս. Լուսաւորչին այստեղ ում են կամեցել նմանեցնել: Հայ
ժողովրդի իբրեւ մի նոր Խարայէլի, առաջնորդ * ս. Գրիգոր՝

* Համ. Ագաթանգեղոս. Թեֆլիս, 1882. էջ 492.

պէտք էր նաեւ «իրրեւ զՄովսէսն զայն ի հնումն» անյայտութեան մէջ, արտաքոյ կարգի մահով վախճանած լինէր: Առհասարակ նորա ձգնաւորական կեանքի մասին Ագաթանգեղոսի և ուրիշների պատմածները շատ դժուար է հաշտեցնել ժամանակակից իրականութեան հետ: Լուսաւորչի օրով իսկական կրօնաւորութիւն դեռ գոյութիւն չունէր. եզիպտոսի և Ասորիքի անապատներում դեռ նոր դորա սկիզբն էր գրուում և այդ մասին ոչ ոք Հայաստանում լսած չէր: Ընդ կարող ուր մնաց թէ «մենաստաններ լինէին» նոցա միջից կարելի լինէր «աշակերտներ ժողովել: Մի պատերազմող, դեռ նոր քրիստոնէութիւն ընդունած ժողովուրդի մէջ ի՞նչ հող կար մենաստանների համար, և արդարութիւն էր, որ այդ ժողովուրդի լուսաւորիչը իւր առաքելական մեծ գործը թողնէր՝ «լեռնակեաց, մենակեաց, սորամուտ, ծակախիթ եղեալ, և զառօրէական խոտարուտ ճարակօքն վճարել»: արդեօք նոյն խօսքը, որ քրիստոնեայ մարդիկ ս. Արիստակէսին էին ուղղում՝ աւելի իրաւունքով նորա հօրը չէին ասի. «Լաւ է քեզ գործ մշակութեանն Աստուծոյ՝ քան զայդ մենաւորութիւն բնակութեան յանապատս»: * Նոյն Ագաթանգեղոսի նկարագրութիւնից պարզ երևում է, որ նա այսպէս և ընդունել ու վարուել է: Ագաթանգեղոսի պատմութեան մէջ երկու իրարից ակներև տարբերութիւն կէտերում մինչև իսկ հակասական՝ աւանդութիւններ իրար են յերիւրուած, և անշուշտ ձգնական կեանքին վերաբերեալ կտորներն աւելի ուշ են յառաջ եկել, դարաւերջի կամ յաջորդ դարի գաղափարներն այս դարի սկիզբն են փոխադրում և իրրեւ կարկատան միում, մինչդեռ իսկութիւնն այն է, որ ս. Լուսաւորիչ՝ «Զաւետարանական ընթացսն և զվերականգնութիւն եկեղեցւոյ սրբոյ՝ շնորհօք Աստուծոյ առանց պակասութեան տանէր, և առաւել փութայր գուն եղեալ՝ զամենայն ոք յորդորելով առ ի բարեացն քաջալերութիւն... Զտայր քուն աչաց և ոչ նինջ արտեանաց, և ոչ հանգիստ իրանացն, մինչև հասանել ի հանգիստ Տեա-

* Նոյն էջ. 495.

ուրն»։* — Ամենայն հաւանականութեամբ նա վախճանուեց ուրեմն իւր մերձաւորներով շրջապատուած և թաղուեց այնպէս, ինչպէս վայել էր թաղել թագաւորի հաւասար իշխանութիւն ունեցող և առաքեալների նմանող հայրապետին։ — Իւր սեփական կալուածքում՝ Թորգանում։ Իսկ Գառնիկ ճգնաւորի զրոյցն իւր յարակից պարագաներով ստեղծուեց այն ժամանակ, երբ ս. նշխարներ գտնելը մի ընդհանրացած սովորութիւն էր՝ ընդհանրացած էր նաև այն հայեացքը, թէ գաղափարական սրբութիւնը ճգնական, կրօնաւորական կեանքն է, և սուրբերի սուրբ լուսաւորիչ չէր կարող այդ մասում թերի գանուած լինել։ — Թէ երբ և ի՞նչ ճանապարհով սկիզբ դրուեցաւ մեր եկեղեցւոյ մէջ կրօնաւորական կեանքի՝ ցոյց են տալիս Փաւստոսի պատմածները Դանիէլ ասորու և նորա Եպիփան ու Շաղիտայ աշակերտների մասին. Ասորիքը, ինչպէս յիշեցինք, կրօնաւորութեան ծննդավայրերից մէկն էր և միայն այս կէտում չէ որ մեծ ազդեցութիւն է ունեցել Դ. և. դարերի հայ-քրիստոնէութեան վրայ։ Բուն կրօնաւորական-վանական կեանքի հաստատողն ու կազմակերպողը եղաւ յետոյ Մեծն Ներսէս. բայց թէ դեռ նորա ժամանակ որչափ խորթ էր այն հայ ժողովուրդի ու նորա իշխողների ըմբռնմանը և զգացմունքներին՝ երևում է Պապ թագաւորի հանած բուռն հալածանքից։ Իսկապէս դարեր պէտք էին՝ պէտք էր Արաբների սոսկալի բռնութեան ներքոյ երկար ժամանակ սերունդէ սերունդ ճմլուէր այդ ժողովուրդը, մինչև նորա մէջ բաւական թուով մարդիկ գտնուէին, որ աշխարհից ձանձրօցած յօժարէին զէնք ու զրահ թողնել, լեռներ ու անապատներ քաշուել, և այսպէս բաղմանային ու ճոխանային մեղանում վանքերը։

Սակայն մենք շեղուեցանք բուն խնդրից։ — Ընդունելով որ ս. Լուսաւորիչ սկզբից և եթ Թորգանում էր թաղուած և առնելին յայանի էր նորա նշխարների տեղը՝ մենք, ինչպէս ակնարկեցինք, անհաւանական չենք համարում, որ այդ

* Նոյն էջ. 508.

նշխարներն առաջին անգամ իրենց տեղից շարժուած լինին
 ս. Լուսաւորչի վերջին շառաւիղի (ս. Սահակի) մահից յետոյ
 և սորա տան, կալուածների ու իրաւունքների ժառանգ ս.
 Վարդանի ձեռքով՝ Դուինի մայր տաճարի կառուցման առ-
 թիւ: Ապա և ոչ մի փաստ չենք գտնում Յուսիկ սրբադանի
 խօսքերի մէջ, որ հերքէր մեր կարծիքը, թէ «Քաղաքու-
 դաշտի ս. Գրիգորի» մասին եղած մի շարք տեղեկութիւն-
 ներ կարող են վերաբերել այս ս. Գրիգորին և ոչ Զուարթ-
 նոց եկեղեցուն: Մենք ոչ թէ պնդում ենք՝ «Քաղաքու-
 դաշտը այստեղ պէտք է Դուին հասկանալ», այլ վկայու-
 թիւն ենք բերում «Հին յիշատակարաններ» — Հայ. եկե-
 ղեցւոյ ժողովոց երկու համառօտ պատմութիւններ, որ մեր
 մի շարք ձեռագիրների մէջ գտնուում են, մէկը Յովհան Օձ-
 նեցու անունով և միւս՝ աւելի կրճատն ու հաւանականաբար
 նախնականը, անանում: — Երբեք նոյն խօսքերով հետե-
 ւեալն են աւանդում. «Հինգերորդ ժողով արար Բարգէն կա-
 թուղիկոսն ի Քաղաքուդաշտի ի ԺԸ. ամի Կաւատայ Պարսից
 արքայի փանն Ակակայ և Բարծումայ, որք Նեստորի աղան-
 դովն ասականէին զարեւելեայսն, որ և գրեաց թէ՛ մի՛ խո-
 տորիք ի բանս նոցա, զի մեր ամենեքեան հաւատացեալ եմք
 ի մի ուղիղ հաւատ՝ Յոյնք, Հայք, Վիրք և Աղուանք. և էր
 այս յաւուրս Զենոնի կայսեր և Անաստասայ ուղղափառաց»:
 Արդ, այս տողերը գրողն անկասկած աչքի առաջ է ունեցել
 Բարգէնի թուղթը, մինչև անգամ շատ բառեր նոյնութեամբ
 նորանից են առնուած.* իսկ թղթի մէջ պարզ առում է,
 որ ժողովը տեղի է ունեցել Դուինում: Զի՞ հետեւում
 միթէ, որ եղել են ուրեմն «Քաղաքուդաշտ» ասելով «Դուին»
 հասկացող հեղինակներ: Եւ եթէ ուրիշ՝ մեր կարծիքով սո-
 ցանից աւելի ուշ ժամանակի, հեղինակներ** Քաղաքուդաշտն
 այստեղ Վաղարշապատ են հասկացել, և մինչև այժմ յա-
 մառութեամբ պահուում է այդ ակներև սխալ տեղեկու-

* Համ. Գերք թղթոց եր. 42, 45, 46.

** Յիշեալ դրուածքներէ մէջ վերջին ժողովը Մանազկերտին
 է. ուրեմն և հաւանական է, որ Ը. դարու գործ լինին նոցա:

Թիւնը, թէ Բարդէն կաթուղիկոս Վաղարշապատում է ժողով դումարել՝ ինչո՞ւ նոյն մարդիկ չէին կարող «Քաղաքու-դաշտի ս. Գրիգորի» համար ասածը Վաղարշապատի համար հասկանալ: Որ ժ. դարի պատմիչներ Վաղարշապատին են Քաղաքուդաշտ ասում, այդ մենք ինքներս գիտէինք ու յիշել ենք. բայց արդեօք իրաւո՞ւնք է տալիս այդ անդելու, «թէ Քաղաքուդաշտը միշտ Վաղարշապատն է եղել և ո՛չ Գուինը».— հենց այդ է, որ չենք ընդունում:

Հարկ չենք տեսնում նաև, որ նոր ի նորոյ պատմէին մեզ, թէ երբ է այրուել և երբ վերաշինուել Գուինի եկեղեցին. քանի որ ինքներս այդ պատմել էինք: Եկեղեցու շինութիւնն ըստ Սերէոս ԻԳ. գլ. աւարած էր, ճշմարիտ է, արդէն Ներսէս Գ. ի նախորդ — ո՛չ թէ, Նղբի, այլ Կոմիտասի օրով. բայց չէ՞ որ այդ միջոցին Գուինը շատ ծանր աղէտի ենթարկուեցաւ. արար առաջին հրոսակները, որ «ստապեցին սրով զբաղմութիւն քաղաքին և առեալ զաւար և զկապուտ քաղաքին ելին».— դուցէ՛ մայր տաճարն ևս չէին խնայել և նա վերանորոգութեան պէտք կունենար: Մենք էլ այն կարծիքն էինք յայանել, թէ Կաղանկատուացու յիշածը Քաղաքուդաշտի ս. Գրիգորի շինութեան մասին՝ կարող է այսպիսի մի նորագութեան վերաբերել: Գորանով մենք ընդունած չենք լինում ամենևին, որ Կաղանկատուացու պատմածը բաւացի կերպով ճիշտ է. մեր խօսքը միայն անուանների մասին է: Հայոց կաթուղիկոսը Կոստանդին կայսեր «Հայրագիր», եկեղեցու նաւակատիք են, — առասպելներ են հարկաւ Կոստանդ կայսրը ոչ աւելորդ զբաղ ունէր, որ Հայաստանում եկեղեցի շինէին, ո՛չ ժամանակ՝ զբօսանքներ կատարելու և նաւակատիքների յաճախելու, ո՛չ էլ Հայաստանից պէտք է վարպետներ տաներ իւր պալատում՝ եկեղեցի շինելու համար, քանի որ այդ վարպետներն էլ Յունաստանից էին եկել: Կաղանկատուացին առհասարակ անվատահէլի պատմիչ է, իսկ այս գլխում գրեթէ ո՛չ մի ուղիղ նախադասութիւն չունի. բաւական է յիշել, որ նորաստեղծ Կոստանդ կայսրը Հայաստանից վերադառնալիս ճանապարհին մեռաւ, մինչդեռ իրօք 14 տարի իշխել է այ-

նուհետեւ: Այսպիսի պատմութեանքները կարող են միայն մուծ յիշողութիւն լինել ստոյգ դէպքերի, և մենք միայն պատմութեանքի ոգին ի նկատի ունենալով, առանց մտաբերելու իսկ, որ առնուած է Կաղանկատուացուց՝ ենթադրել ենք, թէ գուցէ այստեղ Գուինի ս. Գրիգորի մասին է խօսքը: Իսկ ինչ է եղել բուն իրողութիւնը, ինչ շինութիւն է արել Ներսէս Գ. և ինչպէս պէտք է հաշտեցնել այդ շինութեան մասին եղած տարբեր պատմութիւնները՝ այդ պարզելու համար մենք կաշխատենք նախ նորա հայրապետութեան և նորա օրով տեղի ունեցած կարեւորագոյն դէպքերի ժամանակագրութիւնն ստուգել՝ ուղիղ չհամարելով Յուսիկ սրբազանի տուածը:

Ներսէս Գ. հայրապետական աթոռ պէտք է բարձրացած լինի յիրաւի 641 թ. ինչ որովհետեւ Սերէոս ժամանակակից և անպայման արժանահաւատ պատմիչը՝ ինչպէս Գուինի առաջին առումն, այնպէս և նոյն ժամանակ տեղի ունեցած եզրի մահը և Ներսէս Գ. ի յաջորդութիւնը դնում է այն խառն կարճ ժամանակամիջոցում, որ անցաւ Հերակլի մահից յետոյ (441 թ. 24 մայիս), մինչև նորա չորեքտասանամեայ թոռ Կոստասի կամ Կոստանդի թագաւոր նստելը (նոյն թուի աշնանը*): Երբ եղաւ Զուարթնոց եկեղեցու շինութեան սկիզբը՝ Սերէոս որոշ չի դնում, բայց նորա պատմութեան կարգին հետեւելով, ամենահաւանական պէտք է համարենք 648 կամ 649 թ. ը: Նա ասում է, որ Կոստանդ իւր թագաւորութեան հինգերորդ տարին, այսինքն 646-ին՝ աքսորից վերադարձել է Ասպետին—Վարազդաիրոց Բագրատունուն, և առանձին շնորհներ արել նորա որդի Սմբատին. ապա Վարազդաիրոց փախստեամբ Հայաստան է եկել, Կիւրապաղատութեան պատուի արժանացել և չստացած վասնճանուելի, Թէոդորոս Ռշտունին զօրավար կարգուելով եկել է Հայաստան, — իսկ ի դալ միւսում ամիս Արաբացիք նոր արշաւանք են սկսել, յամին երկրոր-

* Geschichte der Byzantinischen Litteratur,—K. Krumbacher 2-te Aufl. München, 1897 p. 951.

դի» գրաւել Արցախու բերդը: Թէպէտ այս վերջին տեղում
ասած է «յամին երկրորդի Կոստանդին», բայց ակներե թիւ-
բիմացութիւն է դա, նկարագրուած դէպքերը չեն կարող
642 կամ 643 թ. ին կատարուած լինել: այլ շատ յարմար
են զայիս 648 ին. և պէտք է ենթադրել, որ Սերէոսն ինքը
«յամին երկրորդի» ասելով կամեցել է կապել նախնեթացի
հետ, իսկ մի ուրիշը՝ պակասաւոր գտնելով այդ որոշումը,
աւելացրել է ժամանակակից կայսեր անունը:— Ահա այս
դէպքերից յետոյ զայիս է եկեղեցւոյ շինութեան նկարա-
գրութիւնը և նորան հետեւում է անմիջապէս Յունաց և
Հայոց եկեղեցիների մէջ եղած խարութիւնները վերացնելու
համար կայսեր հրաման տալը և Դուինի ժողովի գումարումը:
Վերջին դէպքերը կապ ունին անշուշտ այն հանգամանքի
հետ, որ Կոստանդ 648 թ. ին հրատարակեց իւր «Տիւպոս»
կոչուած նշանաւոր հրովարտակը, որով արդելում էր իւր
պապի ժամանակից ծագած «ներգործութեանց» և «կամքերի»
վէճերը, և խստիւ հետամուտ էր այնուհետեւ պետութեան
բոլոր սահմաններում իւր հրամանները հաստատել տալու:
Եկեղեցական միութիւն վերականգնելու: Դուինի ժողովը
պէտք է ուրեմն գումարուած լինի 649 թ. ին, կամ աւելի
հաւանականութեամբ 650 ին. որովհետեւ Դուինի մայր եկե-
ղեցում կայսեր և կաթողիկոսի միասին հաղորդուելուց յե-
տոյ վերջինիս ընդդիմախօս եպիսկոպոսն իւր խօսակցու-
թեան մէջ ասում է, թէ ժողովը չորս տարի առաջ է եղել,
իսկ Կոստանդ կայսրը Հայաստան կարող է եկած լինել միայն
653—654 թ. ին՝ համաձայն Սերէոսի վկայութեան, թէ նորա
թագաւորութեան տասներկուերորդ տարին Հայերն ազա-
տուեցան Յոյներից և հպատակուեցան արաբներին, որ և
բոլորովին համապատասխան է արտաքին պատմութեան ցու-
ցումներին: Այդ թիւը, որի ստոյգ լինելն անհերքելի
վկայութիւններով հաստատել կարելի է՝ մի հաստատուն
կռուան է Սերէոսի տուած միւս տեղեկութիւններն ևս հաս-
տատելու և ճշտելու համար: Ըստ այսմ կայսրն ու կաթող-
իկոսը հաղորդուեցան միասին Դուինի ու Դրիգոր եկեղեցում
654 թ. ին. պետութիւնն ամենաժանր կացութեան մէջ էր այդ

ժամանակ և շատ հասկանալի է Սերէոսի հաղորդածը թէ հանգամանքներն ստիպեցին կայսեր շտապով մայրաքաղաք վերադառնալ: Նորա հետ գնաց կաթողիկոսը և բացակայեց աթոռից վեց տարի, ուրեմն նա վերադարձաւ և շարունակեց եկեղեցու շինութիւնը (60 թ. ին: Այդ կրկին ձշտիւ համալայն է գալիս ժամանակակից միւս դէպքերի նկարագրին: Սերէոս այստեղ վերջացնում է իւր պատմութիւնը՝ յիշելով, որ նոյն տարին Հոյերը Յունաց իշխանութեան ներքոյ մտան և Համադասպ Մամիկոնեան կիւրապաղատ կարգուեցաւ. Արաբացւոց մէջ մեծ խռովութիւններ ու ներքին պատերազմներ տեղի ունեցան, որոնցից յաղթող ելաւ և բոլոր երկիրներին տիրապետեց Մաւրաս. իսկ Մաւրաս միահեծան ամիրայեաւ է եղել 661 թ. ին: Երբ նա այդ տողերը գրում էր, անշուշտ դեռ կենդանի էր Ներսէս Գ.: Այնուհետև Հայերը կրկին հպատակեցան Արաբացիներին և, ըստ Ասողիկի, Ներսէս Գ. ի խնդրանք, ըստ Ղևոնդի՝ իւր իշխանութեան երկրորդ տարին՝ Մաւրաս կամ Մուաւիա ամիրայեաւ Հայոց իշխան կարգեց Գրիգոր Մամիկոնեանին: Ներսէս Գ. ուրեմն դեռ կենդանի էր 662 — 663 թ. ին* և վախճանած պէտք է լինի ամենայն հաւանականութեամբ 663-ին:

Ժամանակագրութիւնն այսպէս ստուգելուց յետոյ, յարակից դէպքերն ևս պարզելու համար՝ մենք պէտք է Սամուէլ Անեցու նման յետին դարերու ժամանակագիրներին պատահական տեղեկութիւններն ու զանազան Պատմածեան-

* Ասողիկ նորա մահը դնում է Հայոց ճի. (120) թ. ին. ըստ իս փրկչական թիւ ստանալու համար դորա վերայ պէտք է աւելացնենք՝ ո՛չ թէ 551, ինչպէս սովորաբար անում են, այլ 553: Եղել են ուրիշ նկատողներ ևս, որ հները Հայոց թուահանի սկիզբ պէտք է համարած լինին 554, և ո՛չ 552 թ. ը: Մենք կաշխատենք ապացուցանել այս և դորանով աւելի ևս անկասկածելի դարձնել մեր մի ուրիշ կարծիքը, թէ Հայոց թուականը Ներսէս Բ. Աշտարակեցու 554 թ. ին գումարած Դուինի նշանաւոր ժողովումէ հաստատուել: Այս խնդրին կդառնանք սակայն ուրիշ անգամ, երբ բաւականաչափ փաստեր կլինին մեր ձեռքում:

ների կարծիքները չժողովներ ու աշխատենք անպատճառ միմեանց հետ համաձայնեցնել, այլ ժամանակով անմիջ մտնել փաստհելի աղբիւրները քննենք ու դորա համեմատ միւս մեր լսածների մէջ բուն իրականութիւնը մեզ պատկերացնել աշխատենք: Մեր կարծիքով այստեղ առաջին կարեւոր հարցն է, թէ երբ և ի՞նչ պատճառաւ Զուարթնոց եկեղեցին ս. Գրիգորի անուանով սկսան կոչել: Սերէոսի օրով, Ներսէս Նինոյի կենդանութեամբ՝ նա այս վերջին անունը չի կարող կրած լինել, ինչպէս տեսանք Նինոյը նուէր էր բերել այն երկնային Զուարթուններին — գուցէ մի որոշ դիտաւորութեամբ: Պէտք է ի նկատի ունենալ որ հրեշտակների պաշտամունքն ու անակատարութիւնը շատ հին չէ եկեղեցւոյ մէջ: Այդ պաշտամունքն արծարծողը և հրեշտակների մասին դաւարանական տեսութիւններ հաստատողն եղան զլիաւորապէս Ս. դարում Գիոնէսիոս Արիոպագոս անուան ներքոյ հրապարակ ելած գրքերը: Երբ Ներսէս Գ., որ իբրեւ յունական կրթութիւն ստացած մարդ լաւ ծանօթ էր անշուշտ այդ տեսութիւններին՝ կաթողիկոս դարձաւ, հաւանականաբար Հայոց եկեղեցու նախնաւանդ և պարզ կարգերի մէջ ոչինչ չգտաւ հրեշտակների վերաբերեալ, և այդ նորան շատ խորթ էր թուում: Առսաւորչի տեսիլը խիստ յարմար առիթ էր երկնային զուարթունների անունը փառաւորելու և մեր եկեղեցւոյ պաշտամունքի մէջ մի՛ իւր կարծիքով զղալի պահաս լրացնելու, և ահա նա Զուարթունների անունով կոչեց իւր կառուցած եկեղեցին: Սակայն Հայ ժողովուրդը չընտելացաւ այդ անուան և, սովոր լինելով եկեղեցիների հետ միշտ որեւէ սուրբի յիշատակ կապել՝ այդպիսի մի յիշատակ էր որոնում նոր անուն զնելու համար: Հարց է՝ արդեօք Ս. դարում արդէն այդ փոփոխութիւնը տեղի ունեցել էր և երբ Աւոնդ պատմագիրը Ներսէս Գ. ին «չինոյ սրբոյն Գրիգորի» է անուանում, այս եկեղեցին ունի ի նկատի: Ըստ երեւութին միայն դրական պատասխան կարելի է տալ այդ հարցին, ինչպէս և արել է Յուսիկ Սրբազան: Թէպէտ մեր յետոյ եկող պատմիչների համաձայն Ներսէս Գ. Արտաշատում ևս ս. Գրիգորի եկեղեցի է շինել և գուցէ ուրի

շինութիւններ ու նորոգութիւններ է արել, բայց քանի որ Սերէոս միայն Զուարթնոց եկեղեցին է յիշում իբրեւ պարծանք նորա շինարարութեան և ուրիշներն էլ կենտրոնական տեղ միշտ դորան են տալիս՝ պէտք էր առանց այլևայլութեան համաձայնէինք Սրբազանի հետ: Եւ սակայն, եթէ նոյն այս ս. Գրիգորի նկարագիրն է, որ տալիս է Ղևոնդ իւր պատմութեան է՝ գլխում՝ պատմելով նորա աւարի ենթարկուելը Ը- դարի սկզբում, — ճշտեղից ստացաւ նա «զվայելչութիւն երևելի և պատուական սպասուցն», որ ի նմա ամբարեալ թագաւորացն, իշխանաց և նախարարաց աշխարհին»: Եկեղեցւոյ շինութիւնից յետոյ դեռ յիշումն տարի չէր անցել և այդ ժամանակամիջոցում մեր աշխարհը սեփական թագաւոր չէր ունեցել. մտածել թէ խօսքը Յունաց կայսրների մասին է՝ այն կայսրների, որոնց երեսից խեղճ երկիրը միայն աւերածութիւններ ու աւարառութիւններ էր տեսել, — և թէ նոցա հետ միացած հայ իշխաններն ու նախարարներն ամէն ջանք դործ էին դրել յատկապէս այս եկեղեցին ճոխացնելու, անտեղի կլինէր: Մեր կարծիքով այդ նկարագիրն այն դէպքում միայն կարող է յարմարուել Զուարթնոց եկեղեցուն, երբ ենթադրենք, որ Դուինի ս. Գրիգորից այստեղ էր փոխադրուել հայրապետանոցը՝ դարերի ընթացքում ժողովուած իւր արդ ու զարդով, իւր սպասներով, իւր սրբութիւններով. — փոխադրուել էին ի միջի այլոց ս. Գրիգորի նշխարները և փոխադրել իրենց հետ ս. Գրիգորի անունն այն հայրապետական եկեղեցւոց այս եկեղեցու վերայ: Եւ այս կարծիքը, որով մի շարք մօլթ խնդիրներ մի անգամից կպարզուէին՝ առանց հիմունքի չէ:

Յուսիկ Սրբազան զուր տեղը մի տեսակ անխորհուրդ դործ է համարում Զուարթնոց եկեղեցու կառուցումը: Պէտք է յիշեցնենք կրկին, որ Ներսէս Գ. կաթողիկոս եղաւ Դուինի առաջին առումից անմիջապէս յետոյ: Յովհաննէս պատմագիրը պատմում է, որ երբ Հայոց իշխանները կամենում էին նորան Եզրի տեղ հայր, աթոռ բարձրացնել, «նա յապշութիւն լեալ յանհնարին կոտորելոցն, որ ի դերելոց քաղաքին՝ գաղտնադնաց փախստեայ լինել խորհէր»:

իրր ոչ կարող կալ ի քաղաքավարութեան այնմ առաի-
ճանի մեծի: Իսկ երբ յողորական բանից և ի սաղրելոյ
նախարարացն հնազանդեալ հաստատէր—գուցէ սիրար չէր
տալիս այլ ևս այդ աւերածի մէջ նստել, գուցէ և նախատե-
սում էր այն բոլոր չարիքը, որոնց պէտք է ենթարկուէր
հայրապետանոցը Արաբացոց յաջորդ արշաւանքների և տի-
րապետութեան ժամանակ՝ երկրի քաղաքական կենտրոնում
գտնուելով, բռնակալ վարիչների, աւարառուների և ընչաքաղց
հարկահանների աչքի առաջ: Եւ նա ամենայն հաւանակա-
նութեամբ մտքում զրեց հայրապետական աթոռը իւր նախ-
կին բնակավայրը՝ Վաղարշապատ, փոխադրել: Բայց արդեօք
բուն կաթուղիկէի մօտ բնակութիւն հաստատուելու առանձին
անյարմարութիւններ կային, տեղը նեղուածք էր, օդը լաւ
չէր, և այժմեան Զուարթնոց եկեղեցու աւերակների հովա-
սուն զիրքը, չորս կողմի ազատ տարածութեամբ, շինութիւն-
ներ անելու, պարտէզներ ու ծառատունկներ անկելու մեծ
յարմարութեամբ՝ նորան աւելի էր գրաւում. թէ ժամա-
նակն այդպէս էր, նա յիրաւի իւր անմիջական նախորդ-
ների և յաջորդների նման բռնուած էր շինարարութեան
«գեղեցիկ իմն մոլութեամբ»: Կանգուն կաթուղիկէն քակել և
տեղը նորը կառուցանել չէր վստահանում, իսկ ինքն
աւելի փառաւոր, հայրապետական աթոռի պերճութեան և
իւր ճաշակին աւելի համապատասխան տաճար կկամենար
ունենալ. — յամենայն դէպս առանձին եկեղեցի կառուցա-
նելով այստեղ՝ նա երեւի ոչնչով մեղանշած չէր համարում
իրեն կաթուղիկէի նուիրականութեան դէմ: Ընդհակառակն,
Զուարթնոց անուամբ ս. Լուսաւորչի տեսչեան յիշատակը
վերականգնելով՝ նա մի խորհրդաւոր կապ էր հաստատում սորա
և Միաճնի իջման վայրի մէջ. գուցէ այստեղ մի խաչ, մի
արձան ևս կար ս. Լուսաւորչի և առաջին քրիստոնեայ թա-
գաւորի սրտառուչ հանգիպումը յիշեցնող: Մի խօսքով Վա-
ղարշապատն իւր ամբողջ շրջապատի հետ նուիրական յի-
շատակների մի հանդիսավայր էր, և երբ հայրապետը նորա
սուրբ եկեղեցիների մօտ բնակութիւն էր հաստատում, միև-
նոյն էր թէ նախկին Մայր Աթոռումն է: Կարելի է Կոմիտաս

կաթուղիկոսն ևս իւր շինած ս. Հռիփսիմի մօտ բնակութիւն ունէր, որի «եկեղեցապանն» էր եղել առաջ, և կրկին կաթուղիկէն էր մնում Մայր տաճար: Այդպէս Ներսէս Գ. կարող էր մի նոր եկեղեցու մօտ բնակել, և Մայր տաճարը մնար դարձեալ ինչ որ էր:

Նա ինքը հարկաւ հազիւ թէ նպատակին հասած և անձամբ Աթոռն այստեղ փոխադրած՝ թող թէ երկար ժամանակ բնակած լինի քանի որ նորա պաղխառութիւնից վերադառնալու միջոցին շինութիւնները դեռ չէին վերջացել, իսկ այնուհետեւ ինչպէս վերեւի ժամանակադրութիւնից երևում է, նա երկար չապրեց: Դորա փոխարէն յաջորդ Անաստաս կաթուղիկոսը, որ նորա սենեկապանը լինելով նորա տարագրութեան ժամանակ միանդամայն «վերակացու շինուածոց հրաշակերտ եկեղեցւոյն գտանէր», չհեռացաւ ամենայն հաւանականութեամբ այդ շինուածքից, որի վերայ շատ աշխատանք էր թափել, և հայրապետական իշխանութեան հետ ժառանգեց իւր նախորդից նաեւ այն տեղերը, որ սա «յարկս բնակութեան ինքեան յօրինեալ» էր: Յաջորդ կաթուղիկոսները մնացին այդտեղ գուցէ մինչև վերոյիշեալ 703 թ. ին տեղի ունեցած՝ աւարառութիւնը: Այդ ժամանակներն արդէն Արաբացիք բոլորովին հաստատուեցան երկրի մէջ և աւետական վարչութիւն կազմակերպեցին. և որովհետեւ Դուինը դարձաւ կրկին աշխարհական կառավարութեան կենտրոն, ըստ հնաւանդ սովորութեանն ոյն կենտրոնում պէտք է նստէր նաեւ ժողովուրդի հոգեւոր պետը՝ կաթուղիկոսը: Բայց թէ իրօք կաթուղիկոսներն առ ժամանակ Զուարթնոց եկեղեցու մօտ են բնակութիւն ունեցել՝ դորան մի կողմնակի ապացոյց է նաեւ այն հանդամանքը, որ երբ երկրաշարժը Դուինում մեծ աւերմունքներ գործեց 893-895 թ., ժամանակի Գէորգ Բ. կաթուղիկոսն այստեղ փոխադրեց կրկին իւր բնակութիւնը: Բոլորովին անհասկանալի է մեզ համար, թէ ինչո՞ւ Յուսիկ Արքայանը ճիշտ չի համարում այս մասին Թովմա Արժրունու պատմածը,* որ լինելով աւհասարակ մեր ինքնուրոյն արժանեաց

* Պատմութիւն տանն Արժրունեաց, Կ. Պոլիս. 1852, էջ 260

տէր և լաւ աղբիւրներէից օգտուող պատմիչներէից մէկը՝ ներկայ գէպքում՝ զրեթէ ժամանակակից է և հետաքրքրական մանրամասնութիւններէ ծանօթ. մինչդեռ նա Սամուէլ Անեցու ժ.՝ դարի ժամանակագրութեան մէջ ո՛վ զիտէ որտեղից պատահմամբ ներս սպրդած տեղեկութիւնը — «210. ս. Գրիգորի վանքն այրեցաւ» — իբրեւ հաստատ իրողութիւն ընդունելով և առանց որեւէ հիմունքի այն ըստ ամենայնի անհաւանական ենթադրութիւնն անելով, թէ ս. Գրիգորի վանքը Զուարթնոց եկեղեցին է, — խիստ ծանրակշիռ եղբակացութիւններ է հանում այդտեղից։ Վերջինս 740 թ. ին անվերականգնելի կերպով կործանուած լինել չի կարող. ոչ միայն Թովմա Արծրունու վկայութիւնն է հաստատ, որ նա կանգուն էր Թ. դարի վերջում, այլ նաև Յովհաննէս պատմադրի նկարագրութիւնն այնպիսի ձևով է, որ ամենեւին տկնարկ չկայ աւերակի մասին և պարզ պէտք է լինի, թէ նորա ժամանակ այդ եկեղեցին գեռ շէն էր, բնակութիւններով և ծառատաններով շրջապատուած։ Մնում է ուրեմն նորա կործանումը դնել Յովհաննէս կաթողիկոսի մահուան և Անույ ս. Գրիգորի* կառուցման ժամանակամիջոցում՝ այսինքն 930 — 1000 թ. ին. և կործանման ամենահին վկան է Ասողիկ։ Կարելի է կարծել, որ Գագիկ թագաւորի ժամանակ վաղուց չէր փլած այդ եկեղեցին, և նա մի «նոյնաձև»ը Անիում կառուցանելով՝ գոհացում տուած եղաւ ժամանակակիցների զգացման, որոնք մեծ ամոսոսանքով պէտք է յիշէին հրաշակերտ տաճարի կործանումը։ Իսկ թէ Այրիվանեցու «քակեցաւ ի Տաճկաց» խօսքը Ժ. դարում (Յուսուփի արշաւանքի միջոցին?) տեղի ունեցած մի ստոյգ իրողութեան յիշատակութիւնն է, Ղևոնդ պատմադրի նկարագրած աւարառութեան մի հեռաւոր արձագանքը լինի, — դժուարանում ենք որոշել։ Ինչ վերաբերում է այրուածքին՝ դորա նշան-

* Ի գէպ, այս եկեղեցին Անույ կանգուն աւերակներէ մէջ որոնելն ի զուր է, քանի որ արդէն ԺԳ. դարում ապրող Մխիթար Այրիվանեցին (Պատմութիւն, Մոսկվա, 1860. էջ 57) նորա մասին ասում է. «Ենիսի սուրբն Գրիգոր աննման ի յԱնի, որ այժմ հանգուցեալ է»։

ները բուն տաճարի վերայ չեն երևում, այլ կողմնակի շէնքերի վերայ. կրակ պէտք է ընկած լինի այստեղ վերջնական աւերումից շատ առաջ, երբ այրուած մասը քանդել են և նորա քարերով նոր պատեր դրել՝ նորոգութիւն արել:

Ասկայն դառնանք մեր բուն խնդրին: Մեզ թուում է, թէ ս. Լուսաւորչի նշխարների Զուարթնոց եկեղեցում լինելու մասին յիշատակող պատմիչներն առհասարակ մի քանի աւանդութիւն միմեանց հետ շփոթում են: Այսպէս, երբ Կաղանկատուացին պատմում է, որ նշխարները փոխադրուած են Զուարթնոց եկեղեցին Գրիգոր Մամիկոնեանի ձեռքով Թորդանից, իսկ Վարդան պատմիչ նոյն նշխարների մասին խօսելով ասում է, թէ Գր. Մամիկոնեան Կ. Պոլսից էր բերել՝ արդեօք մինչանչպէ՞տք է համարուի այդ, որ նոցանից ոչ մէկը ստոյգ չի իմացել—օրտեղից էին բերել նշխարները: Մէկը գիտէր ս. Լուսաւորչի Թորդանում թաղուած լինելը, ուստի ենթադրել է, թէ այդտեղից բերած կլինին. միւսին յայտնի էին «նշխարաց զիւտի» պատմութիւնները, որոնք Եիւդանդիոն են տանում նոյն նշխարները, ուստի այն տեղից և բերած է համարում: Ուղիղը, ինչպէս տեսանք, ոչ այս է և ոչ այն, այլ որ ս. Գրիգորի նշխարները Թորդանից պէտք է բերուած լինին Ե. դարում և պահուած Դուինի մօյր եկեղեցւոյ մէջ. ուրեմն եթէ իրօք Գրիգոր Մամիկոնեան փոխադրել է Զուարթնոց եկեղեցին՝ պէտք է Դուինից փոխադրած լինի: Կարող են նաև այս կէտում երկու տարբեր տեղեկութիւններ իրար խառնուած լինել. մի Մամիկոնեան (Վարդան?) նշխարները Թորդանից Դուին էր բերել, մի ուրիշ Մամիկոնեան (Գրիգոր) Զուարթնոց եկեղեցին փոխադրել. աւանդութեան մէջ երկու դէպքերն ու անձնաւորութիւնները միանում են, և դուրս է գալիս անմիջապէս Թորդանից փոխադրած: Այն գլուխը, որտեղ Կաղանկատուացին պատմում է այս մասին, վերնագրում ունի Սահակ կաթողիկոսի անունը. իսկ պատմուածքի մէջ ո՛չ կաթողիկոսի և ո՛չ զօրավարի անունը կայ: Խօսքն անշուշտ Սահակ Գ. Զորավորեցու մասին է, որի օրով եթէ տեղի ունեցած լինի նշխարների փոխադրութիւնը՝ պէտք է դնենք

մօտաւորապէս 778 և 785 թ. ներքի մէջ.* բայց Կաղանկատուացին միայն Խորայէլ եպիսկոպոսի Հայաստան դալն է այդ ժամանակի մէջ դնում. նշխարները կարող են նաև աւելի վաղ փոխադրուած լինել՝ արդէն Անաստասի օրով, և հաւանականաբար, ինչպէս նկատեցինք, հայրապետանոցի բոլոր ունեցուածքի հետ:

Այս պատմութեան մի ստոյգ աւանդութեան վերայ հիմնուած լինելը երևում է նաև նորանից, որ այստեղ նշխարները յիշուում են իբրև «հանդուցեալ ի նորաշէն յարկս եկեղեցոյն» հակառակ Յովհաննէս պատմագրի, որ ակներև թիւրիմացութեամբ ներսէս Գ. ի ձեռքով եկեղեցու չորս սիւների տակ է դնել տալիս նշխարները: Տեսանք, որ արդէն իրենց առաջին տեղում այդ նշխարները ո՛չ թէ հիմքի մէջ, այլ, երևի առանձին պահարանով, սեղանում պէտք է պահուած լինէին, որով և հասկանալի է դառնում նոցա տեղից տեղ փոխադրուելու դիւրութիւնը: Սակայն Յովհաննէս պատմագիրն ևս իրենից չի հնարել անշուշտ իւր պատմածը.** այսպիսի պատմագիրներն առհասարակ ոչինչ չեն հնարում, այլ միայն գործ են ածում անվստահելի աղբիւրներ՝ վկայաբանութիւններ, միտումաւոր զրոյցներ ևլն. նա գուցէ մի տեղ կարդացել է, որ ս. Գրիգոր անունով մի եկեղեցու հիմքում դրուած են ս. Լուսաւորչի մատուռները և այդ բերել կապել է իւր ժամանակի ս. Գրիգոր կոչուող Զուարթնոց եկեղեցու շինութեան հետ: Ենթադրելով, որ ս. Լուսաւորչի նշխարները «բոլորովին ամենայն ոսկերօքն հանդերձ» և. դարու միջոցներին, Դուին էին փոխադրուել, նոցանից մի մաս միայն Զենոն կայսեր ու Վահան Մամիկոնեանի օրով Բիւզանդիոն է

* Սահակ Գ. ի աթոռ բարձրանալու և Գր. Մամիկոնեանի մահուան տարիները:

** Անվաւերականութեան մասին ո՛չ մի խօսք լինել չի կարող: Եթէ ամէն մի պատմական յիշատակութիւն, որ դժուար հասկանալի կամ անգուր է մեզ համար, եկամուտ յաւելուած համարենք, ինչպէս անում է Յուսիկ Արքազան կամ Հ. Սահակ, պատմութիւնը ո՛ւր կ'մնայ:

տարուել, որի հետ և կապուել են նշխարաց դիւտի պատ-
մութիւնները, իսկ մնացածը պահուում էր Գուրնում, — շատ
անհաւանական չի լինի ընդունել, թէ Ներսէս Գ. իւր շի-
նած մի ուրիշ (օր. Խոր-միբապի) ս. Գրիգոր եկեղեցւոյ սիւ-
ների տակ դրել է այդ նշխարները՝ «առ ի անշուշտ մնացա-
կանութեամբ պահել զանձոյն երկնաւորի ի վերջաց տպական-
չաց»։ Ապա մնացել են միայն գլուխն ու աջը, որ նորա մահից
յետոյ (գուցէ նոյն իսկ իւր օրով) փոխադրուել են Զուարթնոց
եկեղեցին, և գլուխը դրուել է սեղանի վերայ «արտաքոյ ի դգրո-
ցի», «ի յոյս բարեաց փափաքողաց նմա և ի բժշկութիւն
տխտակրելոց»։ — իսկ այս վերջին հանդամանքը նպաստել է նոյն
Շինողի երկու տարբեր ձեռագործների նկարագրութիւնը մի-
մեանց հետ շփոթելու։ Սորանով կրացատրուի նաեւ, թէ
ինչու Հայոց իշխանն ու կաթողիկոսը շատ դժուարանում
էին Աղուանից պատգամաւորին մաս տալ նշխարներից, ին-
չու յետոյ ծնօտի մասը տուին, ինչու յետագայ դարերում
միայն աջի, գլխի, Բիւզանդիոն տարած մասի վերաբերեալ
յիշատակութիւններ կան, և եթէ ուրիշ նշխարներն ևս յի-
շուում են՝ շատ աղօտ և անվստահ կերպով։ Մի այնպիսի
ժամանակ, երբ, ինչպէս երևում է, մասունքների պաշտա-
մունքը խիստ արագ կերպով զարգանալ էր սկսել մեղանում,
Ներսէս Գ. հոգացել էր, որ ս. Լուսաւորչի նուիրական
նշխարները մի տեղ հանգիստ գտնեն և բաժան բաժան լի-
նելով չցրուին և ծայրահեղութիւնների առթիւ տան, և պա-
հել էր միայն այն մասունքը, որ անկողոպտելի սրբութիւնն
էր հայրապետական աթոռի. նորա յաջորդներն ևս իրա-
ւունք չէին համարում այդ սրբութեանը ձեռք տալ, իսկ երբ
գիջան Խոջայէլ եպիսկոպոսի թախանձանքին՝ միայն գլուխը
կար մէջտեղ, որից և մաս հանեցին։ Աւերջապէս, եթէ այս
ժամանակից ի վեր ջերմեռանդ հայերը միայն Զուարթնոց
եկեղեցու յարկի տակ կարող էին շրթամբք մերձենալ ս.
Գրիգորի մասունքին — «ի բժշկութիւն տխտակրելոց» — հասկա-
նայի է թէ ինչու կարճ միջոցում եկեղեցին անունը փո-
խեց և դարձաւ Առապարի ս. Գրիգոր։ Իսկ ի՞նչ եղան այ-
նուհետեւ ս. Լուսաւորչի նշխարների զանազան մասերը՝ նոր

ի նորոյ հետադասել մեր նպատակից դուրս է. մենք կարիք էլ չենք զգում՝ ո՛չ Զուարթնոց եկեղեցու և ո՛չ Գուլինի կամ մի ուրիշ տեղի ու. Գրիգորի աւերակներ քրքրել այդ նըշխարները գտնելու համար: Մեր եկեղեցւոյ դարաւոր պատմութեամբ նուիրագործուած և անձեռնմխելի սրբութիւնը ներկայումս ու. Լուսաւոր:ի աջն է միայն. նոր նշխարներ ոչ ստեղծել և ո՛չ մանաւանդ ուրիշներին բաշխել կարող ենք: *

Կ. Վ.

(շարունակելի)



ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԵԿԵՂԵՑԻ

ՌՈՒՍԱՅ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՕԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

29-ն Յունուարի 1903 թ.

Յանոււն Հօր Եւ Որդւոյ Եւ Հոգւոյն Սրբոյ.

Եօթանասուն տարի առաջ, 1833 թ. յունուարի 2-ին կնքեց իւր մահկանացուն երանելի ձեր Սերաֆիմ արեղան: Իւր ճշմարիտ քրիստոնէական առաքինական կեանքով՝ դեռ ևս

* Ստիպուած ենք խոստովանել, որ երբ Հ. Խաչիկ Զուարթնոց եկեղեցու սիւնը փորել էր տալիս, մենք ևս շատ հետաքրքրուում էինք, թէ արդեօք Յովհաննէս պատմադրի վկայութեան համաձայն մասունքը կեղնէ՞ այնտեղից: Մի ամառնային օր Հ. Խաչիկ եկաւ յայանեց, որ փորուածքն արդէն վերջացել է, հողին են հասել, և դեռ ձեռք չտուած՝ կկամենար մի քանի վկաներ տանել ու նոցա ներկայութեամբ բանալ տալ հողը: Գնացինք Բարդուղիմէոս Սրբազանի հետ (այն ժամանակ վարդապետ. ներկայ է եղել նաև Եսայի ոսրկաւադ, այժմ Զաւէն արեղայ). մեր ներկայութեամբ փափուկ, կարծես մազով մաղած, հողը փորեցին և մի քանի ոսկորներ ելան...: Յետոյ Յուսիկ սրբաներն յիշած հանգամանքները կշռելով և պատմական աղբիւրներն ուշադրութեամբ աչքի անցնելով՝ մենք այն եզրակացութեան եկանք, որ Զուարթնոց եկեղեցու սիւնների տակ ու. Լուսաւորչի մասունքը ո՛չ գրուած և ո՛չ գտնուած լինել կարող է: — Բայց այս նորանշան շնչաւորաց գիւտի. պատմութեան մէջ մի տարօրինակ կէտ ևս մնում է. նորա առաջին ականաճես վկաները մե՞նք ենք արդեօք, թէ Հ. Եղիա վարդապետը: